

ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՄ

Համեստը լաւ ապրելու համար կը բաւարարուի կարեւոր սակաւ բաներով, ուստի միշտ խաղաղ եւ ուրախ է: Իսկ փառամոլը անդադար տանջանքի մէջ է դրամ ձեռք բերելու ճոխութիւններու համար, ուստի հոգերէն ու գրադումներէն հանգիստ չունենալով՝ կը տառապի: Այլ չենք ըսեր, որ շատ անգամ շահ ունենալու համար անվայել միջոցներ կը բանեցնէ, որպէսզի իր պատիւը որեւէ ձեռով չպակսի, այս պատճառով ալ խղճմտանքէն չարաչար կը տանջուի: Ուստի աւելի լաւ է չափաւոր ու համեստ ըլլալ եւ գուարթ միշտ ապրիլ, քան հարուստ ու փառամոլ ըլլալ եւ մտքով ու մարմնով տանջուիլ: Ի՞նչն է աւելի ցանկալի մարդկութեան համար, քան այն որ առաւել օգտակար է մեր կեանքը երջանկաբար պահպանել: Այդ պարագային, ի՞նչու այդքան ցանկալի չէ ապրելու համար անհրաժեշտ բաներով բաւարարուիլը, որ մարդու կեանքը գուարթ, առողջ ու երկար կը պահէ:

Միջին դասակարգի քաղաքացիական կենցաղավարութիւնը աւելի ապահով ու հանգիստ է, քան այլ դասակարգիները: Եթէ մէկը խիստ ցած դասակարգ է, ուրիշներ կ'իշխեն անոր վրայ, ուստի միշտ նեղութեան ու վիշտերու մէջ է: Եթէ խիստ բարձր դասակարգ է, ինք կ'իշխէ ուրիշներու վրայ, ուստի շարունակ թշնամութիւն կը կրէ նախանձողներէն: Իսկ ան որ միջին դասակարգի յատուկ կեանք կ'ապրի, ո՛չ լիովին ընկճուած է մէկու մը իշխանութեան տակ՝ որպէս նուազ մէկը, ո՛չ ալ նախանձողներէն թշնամութիւն կը կրէ որպէս իշխանաւոր: Ուստի միշտ խաղաղ ու անվրդով է՝ բաւարարուելով չափաւորով:

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱՆԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Եւ սակայն՝ պատճառը ճի՛շդ ատիկա է: Կը կարծեմ, որ շատ մը մարդոց հասկնալի կ'ըլլայ, երբ կարդան այս վկայութիւնները եւ տեսնեն հրամայողներուն դիմելու հետեւանքը, երբ մարդս ինքզինք կը կապէ Սատանային շղթաներով, որոնք փշրելը բնաւ ալ դիւրին չէ:


Սատանային հետ կապուողները ծանր տառապանքներ կը կրեն:

«Թշնամին ներխուժեր է սիրտս եւ ապականեր է զայն: Սրտիս մէջ սողոսկեր է կասկածը, եւ ես պէտք եղած հաւատքը չունիմ: Յիսուս փորձեց զիս կործանել: Սենեակիս մէջ կը զգամ բոլոր չար ոգիները, որոնք կ'աշխատին սպաննել մարմինս ու հոգիս: Գիշերները երբեմն կը թուի, թէ չար ոգիները կ'ուզեն զիս կանչել հոն՝ ուր յաւերժական կործանումն է: Աստուած տառապանքներս տեսնելով թոյլ չի տար որ ատիկա ըլլայ: Օ՛, եթէ կարենայի տանջանքներս պատմել: Միակ ցանկութիւնս է դժոխքէն ազատիլ: Յիշողութեանս մէջ Աստուծոյ խօսքերն են. «Ահաւասիկ կադինը ծառերը իրենց արմատներէն կտրելու պատրաստ է: Այն ծառը որ լաւ պտուղ չի տար՝ պիտի կտրուի եւ կրակ նետուի»: Ես հիմա այդպիսի կրակի մը մէջ եմ, եւ մեծագոյն ցանկութիւնս է այնտեղէն դուրս գալ»...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 15 ՅՈՒԼԻՍ, 2012

ԹԻՒ 29

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹՈՍԻ 16.24 - 17.13

ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ՎԱՐԴԱՎԱՈ)

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինծի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ոեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ձերմակ եղան: Եւ ահա երեւցաւ Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ:

Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէ՛ք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի ելէ՛ք, մի՛ վախնաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ գատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով. «Մինչեւ որ մարդու Որդին մեռնէնէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»:

Յիսուս պատասխանեց. «Ճի՛շդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՂԱՎԱՌ

Վարդավառը ժողովրդական այն անունն է, որ կը տրուի Հայաստան-եայց եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի նաեւ երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը, ամէն Տէրունական տօներու նման, կը վերաբերի Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը՝ Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւնալուն երեք առաքելներուն՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լեռան վրայ: Ահա թէ ինչ ձեւով կը ներկայացուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան դրուագը Մատթէոսի աւետարանին մէջ.:

«Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ներմակ եղան:

Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

– Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ’ուզես, երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսը Եղիային համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ’ըսէր.

– Այս է իմ սիրելի Որդիս, որուն եւս հանեցայ, անոր մտիկ ըրէ՛ք» (Մտ – 17.1-6):

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնին վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

Կ’ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկներ, ծերեր, այրեր ու կիներ տուներու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւրներուն եւ առուներուն մօտ կուժերով իրարու վրայ ջուր կը թափեն եւ զիրար ջուրերուն մէջ կը մխրեն. այս աւանդութիւնը Նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհի մէջ:

Աւանդապատում

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ (ՄԱՂՄՈՍ 3)

Տէ՛ր, ինչքան շատ են զիս նեղողները, ինչքան շատ են ինձի դէմ ելողները: Շատերը ինձի համար կ’ըսեն. «Անկարելի է, որ Աստուած զինք փրկէ»: Բայց դուն ո՛վ Տէր, դո՛ւն ես պաշտպան վահանս, դո՛ւն ես փառքս, գլուխըս բարձր պահողը: Ամբողջ ձայնով Տիրոջ աղաղակեցի եւ իր սուրբ լեռնէն պատասխան տուաւ ինձի: Ես կը պառկիմ կը քնանամ, վստահ՝ որ գիշերն ամբողջ Տէրը զիս կը պահպանէ: Ուստի բնա՛ւ չեմ վախնար բիւրաւոր այն մարդոցմէ, որոնք ամէն կողմէ զիս կը պաշարեն: Ե՛լ, ո՛վ Տէր, փրկէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս, ապտակ մը տո՛ւր թշնամիներուս, փրկէ՛ ամբարիշտներուն ակօսները: Փրկութիւն դո՛ւն կու տաս, Տէ՛ր, թող օրհնութիւնդ ժողովուրդիդ վրայ ըլլայ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՆՃԱՄԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄՃԱԽՆ

Արդ՝ դուն որ չքաւոր ես եւ աղքատ, ի՞նչու Աստուծոյ մասին անդադար բաներ կ’ըսես. Աստուած իրեն պատկանող որեւէ բանէ զրկե՞ց քեզ: Եղբայրներու նման հարուստին եւ աղքատին հաւասարաբէտ չքաժնե՞ց նոյն աչքերը, նոյն ձեռքերը եւ նոյն ոտքերը: Հաւասարապէս կը վայելենք արեւը, օդը եւ անձրեւը: Բոլորս ալ յառաջ եկած ենք հողէն եւ Ադամէն: Բոլորին համար կայ միայն մէկ մկրտութիւն, մէկ շնորհք, մէկ մարմին ու արիւն Քրիստոսի: Բոլորիս համար կայ մէկ երկիր, մէկ երկինք եւ մէկ տիեզերական նիւթ: Ահաւասիկ ասոնք են Աստուծոյ բարիքները, որ Ան հաւասարապէս տուաւ թէ՛ աղքատին եւ թէ՛ զօրաւորին: Ուրեմն ի՞նչ բանէ զրկեց քեզ եւ կողմնակալութիւն ըրաւ ի նպաստ հարուստներու: Գիտեմ որ այս մասին ոչինչ ունիս ըսելիք, այսուհանդերձ կ’ըսես. «Ո՞րքէ անոր այսքան հարստութիւն»: Լաւ հասկցիր, Աստուած չէ որ իրեն բերաւ, ցոյց տուաւ կամ շնորհեց այդ հարստութիւնը եւ քեզ զրկեց. ումանց հարստութիւնը գոյացաւ ազատութեամբ, ումանց՝ յարատեւ աշխատանքով, իսկ այլոցը՝ հօրենական ժառանգութեամբ:

(Ճառեր՝ Յովհան Մանդակունի)

Ի՞ՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԷ ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԵՐՐՈՐՈՒԹԻՒՆ

Հայր Աստուած, Որդի Աստուած, Սուրբ Հոգի Աստուած, երեքը միասին կը կոչուին Ամենասուրբ Երրորդութիւն:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՒՈՅԹԸ ԿԱՐԵՒՈՐ ԶԷ, ԱՅԼ՝ ՀՈԳԻՒ

- 1.- Բայց Տէրը Սամուէլին ըսաւ. «Անոր երեսոյթին ու հասակին երկայնութեանը մի՛ նայիր, քանզի ես քանակը անարգեցի, որովհետեւ Աստուած մարդուն նման չի նայիր. քանզի մարդը երեւցածին կը նայի, բայց Տէրը սրտին կը նայի»: (Ա. Թագաւորաց 16.7)
- 2.- Վայելչութիւնը սուտ է ու գեղեցկութիւնը ունայն է, սակայն Տիրոջմէ վախցող կիներ պիտի գովուի: (Առ. 31.30):
- 3.- Ձեր զարդը թող չըլլայ, մազերուն յարդարանքը, ոսկեղէնները եւ զարդարուն հագուստները, այլ՝ սրտին մէջ ծածկուած, հեզ եւ խաղաղ հոգիի մը անկորնչելի գեղեցկութիւնը. եւ այդ է թանկագինը Աստուծոյ համար: (Ա. Պետրոս 3.3-4):
Կարդա՛ նաեւ՝ Բ. Կորնթացիս

ԱՌԱԿ (6. 10-11)

Եթէ այսպէս քիչ մը քնանաս, քիչ մը հանգչիս, քիչ մը մրափես, քիչ մը ձեռքերդ կուրծքիդ ծալած մընաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի մը նման քեզ պիտի դիմաւորէ եւ չքաւորութիւնը ժիր սուրհանդակի մը նման դրանդ առջեւ պիտի կանգնի: Բայց եթէ դուն եւս աշխատասէր ըլլաս, ամառը աղբիւրի նման քեզ պիտի ողջունէ եւ չքաւորութիւնը չար մարդու մը պէս ինքզինք պիտի հալածէ:

**ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
14.16-21**

Այն ատեն, Երուսաղեմի վրայ արշա-
ւած բոլոր ազգերու մնացորդները տա-
րիէ տարի Երուսաղեմ պիտի գան երկրը-
պագելու Թագաւորին, ամենակալ Տէր
Աստուծոյ, եւ Տաղաւարահարաց տօնը
կատարելու:

Այն ժողովուրդը որ մերժէ Երուսաղեմ
գալ երկրպագելու Թագաւորին, ամենա-
կալ Տէր Աստուծոյ, անիկա անձրեւ պիտի
չունենայ իր երկրին վրայ:

Եթէ Եգիպտոսի ժողովուրդը չելլէ ու
չգայ, պիտի ենթարկուի նոյն հարուածին
որով Տէրը պիտի պատուհասէ այն ժո-
ղովուրդները՝ որոնք Տաղաւարահարաց
տօնը կատարելու չեն գար:

Եւ պատուհասը, որ եգիպտացիներու
նման վրայ պիտի գայ, պիտի գայ նաեւ
բոլոր այն ժողովուրդներուն վրայ՝ որոնք
Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն
գար:

Այն օրը նոյնիսկ ձիերու սանձին վը-
րայ գրուած պիտի ըլլայ. «Տիրոջ համար
սրբագործուած». Աստուծոյ տան կաթ-
սաներն իսկ սուրբ պիտի համարուին
գոհասեղանին վրայ դրուած տաշտերուն
նման, ու Երուսաղեմի եւ Հրէաստանի
մէջ գտնուող ամէն կաթսայ ամենակալ
Տիրոջ անունով նուիրագործուած պիտի
ըլլայ. այնպէս որ բոլոր անոնք որ գոհ
մատուցանելու կու գան՝ պիտի առնեն
զանոնք եւ անոնց մէջ եփեն իրենց մա-
տաղը: Եւ այն օրը Աստուծոյ տան մէջ
ոնէ վանառորդ պիտի չգտնուի:

Շարունակել Աստուածաշունչէն

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
1.1-7**

Մենք լսեցինք, մեր չափերով տե-
սանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք
Որդին, Բանը՝ որ սկիզբէն իսկ կեանքի
ստեղծիչն էր: Անիկա նոյնիման կեանքն
էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ
կը վկայեմք, ձեզի պատմելով անոր
մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի
յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսե-
ցինք կը պատմեմք ձեզի, որպէսզի
դուք ալ մասնակից դառնաք այն հա-
ղորդակցութեան՝ որ մենք ունինք Հօրը
եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի
հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ
ըլլայ: Ահա թէ ինչու կը գրեմք ձեզի
այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձե-
զի կը փոխանցեմք, սա է՝ թէ Աստուած
լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ:
Արդ, եթէ ըսեմք «հաղորդակից ենք
իրեն» եւ միւս կողմէ շարունակեմք
խաւարի մէջ ապրիլ, կը ստեմք ահա եւ
նշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ
եթէ Աստուծոյ լոյսին մէջ փայլեմք,
ինչպէս ինք լոյսի մէջ է, այն ատեն
նշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք
իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի ա-
րիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԶԷՆ:**